ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մեսրոբյան Վ. Մ. (ՀՀ ՊԿԱ, Երևան, Հայաստան)
vardine.mesropyan@mail.ru
Ներկայացման ամս.՝ 17.07.2019
գրախոսման ամս.՝ 25.07.2019
տպագրության ընդունման ամս.՝17.09.2019

Հոդվածում ամփոփվում են դասախոսների մասնագիտական-հոգեբանական որակների փորձագիտական հարցման արդյունքները: Փորձագետները որպես առաջնային կարևոր մասնագիտական հոգեբանական որակներ առանձնացրել են մասնագիտական խորը գիտելիքները, հաղորդակցման ունակությունը, ինքնավերլուծելու ունակությունը, ինքնազարգացման ձգտումը, հուզական կայունությունը: Բարձր ինտելեկտը, բարեխղճությունը, նրբանկատությունը, հռետորական ունակությունը, խանդավառությունը, հումորի զգացումը դասախոսները նույնպես կարևորել են, սակայն առաջնային չեն համարել: Ստացված արդյունքները վկայում են, որ հայ դասախոսները աշխատանքի մեջ արժևորում են վերը նշված մասնագիտական հոգեբանական որակները: Առաջնորդվում են այն որակներով, որոնք նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Հանգուցային բառեր՝ *կրթության կառավարիչ, դասախոս, չափորոշիչ, հոգեբանական որակներ, մասնագիտական որակներ, փորձագիտական հարցարան:*

Ներկայումս կա մեծ հետաքրքրություն բուհում դասավանդողների գործունեության, փորձի և դրանց մոդելների կիրառման վերաբերյալ: Այդ ամենի մասին են վկայում կրթության կառավարման ոլորտի հոգեբանական հետազոտությունների մեծ մասը: Սակայն դեռ մեր երկրում նմանատիպ հետազոտություններ սակավ են և չեն արտահայտում բուհում աշխատող կրթության կառավարիչների հոգեբանական և մասնագիտական կարևոր որակների առկայության մասին: Որպես կրթության կառավարիչ մենք դիտարկել են դասախոսներին: Մեր նպատակն է բացահայտել կրթության կառավարիչների հոգեբանական-մասնագիտական կարևոր որակները, որի համար կիրառել ենք փորձագիտական հարցման մեթոդը: Այն հոգեբանական հետազոտություններում տեղեկատվությունը հավաքելու ամենաարդյունավետ մեթոդներից մեկն է: Փորձագիտական հարցումը սոցիոլոգիական հարցման տեսակ է, որտեղ ռեսպոնդենտների դերում հանդես է գալիս մարդկանց հատուկ տիպ՝ փորձագետներ: Փորձագետները կոմպետենտ մարդիկ են, որոնք ունեն այս կամ այն ոլորտի վերաբերյալ խորը և բազմակողմանի գիտելիքներ: Փորձագետների հարցումը անցկացվում է մասնագետների նեղ շրջանում՝ հատուկ ինֆորմացիա

ստանալու նպատակով: Փորձագիտական հարցման հիմնական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս բացահայտել հիմնախնդրի առավել էական, կարևոր ասպեկտները, մեծացնում է ինֆորմացիայի և եզրահանգումների հուսալիության, ճշգրտության և հիմնավորվածության աստիճանը՝ փորձագետների գիտելիքների և փորձի օգտագործման շնորհիվ[2]:

Փորձագիտական հարցարանը իր մեջ ներառում է 15 մասնագիտական-հոգեբանական որակներ, որոնք դուրս ենք բերել տեսական վերլուծության արդյունքում: Որակների ընտրությունը պայմանավորված է մեր իսկ կողմից առաջնային հանդիսացող և դասախոսի մասնագիտական-հոգեբանական գործունեությանը նպաստող գործոններով: Տե՛ս Աղյուսակ 1.

Աղյուսակ 1

	1-10 տարվա աշխատանքային ստաժ ունեցողներ(n=)	*10-ից տարուց ավել աշխատանքային ստաժ ունեցողներ(n=)*
	M- միջին արժեք	*M- միջին արժեք*
Մասնագիտական խորը գիտելիքներ	**4.9**	**4.8**
Արհեստավարժություն	**4.6**	**4.6**
Հաղորդակցման ունակություն	**4.9**	**4.8**
Համագործակցության ունակություն	**4.6**	**4.4**
Խանդավառություն	**4.2**	**4.2**
Հռետորական ունակություն	**4.3**	**4.2**
Համարձակություն	**4.4**	**4.4**
Նրբանկատություն	**4.3**	**4.2**
Բարեխղճություն	**4.4**	**4.6**
Հուզական կայունություն	**4.6**	**4.8**
Հումորի զգացում	**4.3**	**4.5**
Ստեղծարարություն	**4.7**	**4.4**
Բարձր ինտելեկտ	**4.7**	**4.7**
Ինքնավերլուծելու ունակություն	**4.9**	**4.5**
Ինքնազարգացման ձգտում	**4.8**	**4.8**
Այլ		

Դասախոսների մասնագիտական և հոգեբանական որակների դուրս բերման համար, որպես տեսական հիմքեր օգտագործել ենք հետևյալ հեղինակների տեսությունները՝ Տ.Կ.Կամզաբաև 1968, Ա.Ս. Մակարենկո 1968, Ս.Դ. Մատյուշկինա 1977, Մ.Յ. Կոնդրատև 1987, Մ.Ի. Պոստնիկովա 1993, Վ.Բ. Օլշանսկի 1994, Ն.Վ.Կուզմին 1995, Ա.Մարկովա 1995, Ն.Ա. Ամինով և Ի.Ի. Օսադչևա 2003, Ռ.Ս.

Նեմով 2005, Ս.Դ. Սմիռնով 2005, Լ.Վ. Եռշովա 2006, Ա.Գ.Ավդիենկո և Գ.Ս. Լուսաևա 2010, Ե.Պ. Իլյին 2012, Ա.Ա.Վեռբիցկի 2014 և այլոք:

Մենք առանձնացրել ենք հետևյալ չափորոշիչները՝ մասնագիտական խորը գիտելիքներ, արհեստավարժություն, հաղորդակցման ունակություն, համագործակցության ունակություն, խանդավառություն, հռետորական ունակություն, համարձակություն, նրբանկատություն, բարեխղճություն, հուզական կայունություն, հումորի զգացում, ստեղծարարություն, բարձր ինտելեկտ, ինքնավերլուծելու ունակություն, ինքնազարգացման ձգտում, այլ որակներ:

Այժմ հիմնավորենք չափորոշիչների ընտրությունը, որոնք տեղ են գտել մեր հարցարանում:

Մասնագիտական խորը գիտելիքներ, արհեստավարժություն, բարձր ինտելեկտ - ինչպես ռուսական այնպես էլ ամերիկյան տեսաբանների վերլուծություններում հանդիպում ենք դասախոսի մասնագիտական խորը գիտելիքների, արհեստավարժության վերաբերյալ բազմաթիվ մոտեցումների: (Ն.Վ. Կուզմին 1995, Ա.Ա. Դիրկաչ 2013, Մ.Մ. Պոտաշնիկ, Ա. Մարկովա 1995, Ռ.Վիլսոն 1964): Մասնագիտական խորը գիտելիքների առկայությունը կարևոր պայմանն է, որպեսզի դասախոսը որպես մասնագետ կայանա և կարողանա իրեն ինքնադրսևորել:

Հաղորդակցման, հռետորականունակություն - Ուսուցման գործունեությունը, նախ և առաջ իրենից ներկայացնում է հաղորդակցում հետևաբար, ապագա դասախոսը պետք է ունենա հաղորդակցման հմտություններ: (Գ.Միդ 1934, Տ.Պարսոնս 1971, Վ.Ս.Մերլին 1986, Լ.Ն.Խարչենկո 2014): Դասավանդումը գործնական հաղորդակցություն է, գիտելիքների, մտքերի փոխանակում[3]:

Համագործակցության ունակություն - ժամանակակից դարում դասախոսի համագործակցելու ունակությունը անձի գործունեության հիմնական կոմպետենցիաներից է: (Ն.Վ. Կուզմին 1980, Ի.Ա. Զիմնյա 2004, Կ.Կ. Պլատոնով 1986): Դասախոսի անձը այսօր ավելի շատ ձևավորվում է գործընկերների, ուսանողների և բուհի ղեկավարների հետ ակտիվ շփումով, քանի որ այսօր դասախոսի անձը երկու ուղղությամբ է հանդես գալիս՝ «Ես և գիտությունը», «Ես և շփումներս»: Խանդավառություն- Խանդավառությունը կամ ոգևորվածությունը ամերիկացի շատ հետազոտողներ համարում են դասախոսի արհեստավարժության նշան, և այն գնահատվում է որպես մանկավարժական բարձր որակավորում: (Կ.Ֆելդման 2007, Մ.Կոլլինս 1977,Տ.Շեռման 2006)[6]:

Համարձակություն - Դասախոսները, իրենց աշխատանքի մեջ ցուցաբերում են համարձակություն: (Տ. Շեռմանն 2006, Կ. Ֆելդման 2007, Ա. Մարկովան 1995, Ռ. Աղուզումցյան 2015): Այս որակը կրող դասախոսները հակված են ռիսկի դիմել և համագործակցել անծանոթ մարդկանց հետ անծանոթ միջավայրում, երբեմն ընդունել ոչ ստանդարտ որոշումներ, դրսևորել լիդերի որակներ: Նրբանկատություն, բարեխղճություն- Դասավանդողի անձը և գործունեությունը կրթության գործընթացի անբաժան մասն են: Անձի անհատական-հոգեբանական որակների վերաբերյալ հոգեբանությունում առկա է «գործոնային» մոտեցման մի շարք մեթոդներ

(Գ. Այզենկ 1968, Ջ. Գիլֆորդ 1965, Ռ. Կետտել 1946), որոնք անձի անհատականության առանձնահատկությունների, բնավորության գծերի ուսումնասիրման լավագույն գործիքներից են:

Հուզական կայունություն - Հուզական կայունությունը դասախոսների հոգեբանական բոլոր հատկությունների և հմտությունների սինթեզ է, որը թույլ է տալիս վստահորեն, առանց հուզական լարվածության արդյունավետորեն իրականացնել մասնագիտական գործունեության պահանջները[1]: Այս խնդրի հետ կապված ուսումնասիրություններ իրականացրել են ամերիկացի հոգեբաններ Գ.Մ. Իերքսը և Ջ. Դոդսոնը 1908, ինչպես նաև ռուս գիտնականներ Վ.Լ. Մարիշուկը 2001, Կ.Կ. Պլատոնով 1972, Բ.Վ. Պլետնիցկին 1975 և ուրիշներ:

Հումորի զգացում - Ներկայում տեսաբանները հումորի զգացումը դիտարկում են այլ կարևոր մասնագիտական-հոգեբանական որակների կողքին, որպես կարևոր կոմպետենցիա[5]: Հումորի առկայությունը կարող է փոխել և նպաստել դրական տրամադրվածությանը, կոտրել հուզական լարվածությունը:

Ստեղծարարություն- Հոգեբանության մեջ առկա են ստեղծարարության բազմաթիվ մոտեցումներ և հայեցակարգեր (Ջ. Գիլֆորդ 1968, Է. Տորրենս 1984, Մ.Վոլլախ 1967, Ֆ.Վիլյամս 1980): Ստեղծարարության ձևավորումը և դասախոսի ստեղծագործական անհատականության զարգացումը նպաստում են աշխատանքային ունակությունների և արհեստավարժության բարձրացմանը:

Ինքնավերլուծելու ունակություն, ինքնազարգացման ձգտում - Դասախոսի անձի ակմեոլոգիական (Օ.Ս. Անիսիմով 2000, Ա.Ա.Բոդալյով 1983, Ա.Ա.Դեռկաչ 2002, Ն.Վ.Կուզմին 1995,) ուսումնասիրությունները տալիս են հնարավորություն պարզելու անձի զարգացման առանձնահատկությունները և դրանց օրինաչափությունները մասնագիտական հասունության փուլում, նրա ձգտումները մասնագիտական ճանապարհին: Այս ամենի շնորհիվ տեսականորեն կարող ենք բնութագրել բուհում դասավանդողի աշխատանքային և մասնագիտական գործունեությունը:

Փորձագիտական հետազոտության ընտրակազմը ձևավորվել է համաձայն առաջադրված նպատակի: Հարցարանը լրացրել են 50 դասախոս- փորձագետներ, որոնք տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթության կառավարիչներ են: Աշխատանքի հիմնական նպատակը ուղղված է ներկայիս դասախոսների մասնագիտական-հոգեբանական որակների բացահայտմանը:

Այժմ ներկայացնենք փորձագիտական հարցարանի արդյունքների վերլուծությունը:

Հարցման ընթացքում փորձագետների հետ զրույցի և հարցաթերթերի մշակման արդյունքում նպատակահարմարենք գտել փորձագիտական ընտրակազմը բաժանել երկու խմբի՝ 1-10 տարվա աշխատանքային ստաժի ցուցանիշի և 10 տարուց ավել աշխատանքային ստաժի ցուցանիշի: Հարցարանի արդյունքների վերլուծությունից հետո կարող ենք ասել, որ դասախոսները գնահատել են մասնագիտական-հոգեբանական հետևյալ որակների անհրաժեշտությունը, որը կներկայացնենք աղյուսակ 1-ում: 1-10 տարվա աշխատանքային ստաժ ունեցող

դասախոսների համար կարևոր մասնագիտական-հոգեբանական առաջնային որակներ են հադիսանում՝ մասնագիտական խորը գիտելիքները, հաղորդակցման ունակությունը, ինքնավերլուծելու ունակությունը, ինքնազարգացման ձգտումը: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ երիտասարդ դասախոսները աշխատանքի մեջ խանդավառությունը, նրբանկատությունը, բարեխղճությունը գնահատել են ոչ այդքան բարձր, ինչը վեր է հանում վերը նշված տեսաբանների տեսության հակադիր կողմերը: Ի հավելումն այս տեսական մոտեցման փորձագիտական հարցման ժամանակ հայաստանյան դասախոսները նրբանկատությունը (Գ. Այզենկ 1952, Ջ. Գիլֆորդ 1959, Ռ. Կետտել 1946) դիտարկում էին, որպես խանգարող հանգամանք՝ այն ավելի շատ շեղում է դասախոսին, քան օգնում:

10 տարուց ավել աշխատանքային ստաժ ունեցող դասախոսները որպես կարևոր առաջնային մասնագիտական-հոգեբանական որակներ են դիտարկել՝ մասնագիտական խորը գիտելիքները, հաղորդակցման ունակությունը, հուզական կայունությունը և ինքնազարգացման ձգտումը:

Հուզական կայունության ցուցանիշը փորձագիտական հարցարանում խոսում է բուհական կառավարիչների հույզերի կառավարման, զսպվածության, հանգստության մասին: Այս աշխատանքը հաճախ պահանջում է լարված իրավիճակներ, ծանրաբեռնվածություն, տարակարծություն և շատ հաճախ կոնֆլիկտները անբաժան մաս են կազմում: Եվ միայն բարձր ինքնավերահսկողություն և հուզական կայունություն ունեցող դասախոսը կարող է լինել կենդանի օրինակ ուսանողի համար:

Ստեղծարարությունը որպես մասնագիտական որակ կարևորել են երիտասարդ դասախոսները: Քանզի ներկայի հրամայականն է լինել ստեղծագործ, որոնել նորը և դրանք կիրառել ուսումնական գործընթացում,ուստի երիտասարդ դասախոսները ավելի ճկուն են, բաց և ստեղծագործ: Համագործակցելու ունակությունը դարձյալ ավելի բարձր են գնահատել երիտասարդ դասախոսները, ինչը դարձյալ խոսում է նրանց բաց լինելու մասին: Արհեստավարժությունը սեփական աշխատանքում ևս երկու խմբերում դիտարկվել է առաջնային:

Այլ որակների մեջ դասախոսները ընդգրկել են հետևյալ մասնագիտական-հոգեբանական որակները՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում, միջազգային չափանիշների կիրառում, նորի որոնում, ուսանողին մոտիվացնելու ունակություն, մարտունակությունը պահելու ունակություն, ինքնաքննադատություն, ինքնավստահություն, թիմային աշխատանք:

Այսպիսով՝ ամփոփելով փորձագիտական հարցարանի տվյալները, կարող ենք փաստել, որ դասախոսները առանձնացրել են մասնագիտական-հոգեբանական հետևյալ որակները՝ մասնագիտական խորը գիտելիքները, հաղորդակցման ունակությունը, ինքնավերլուծելու ունակությունը, ինքնազարգացման ձգտումը, հուզական կայունությունը: Իսկ ահա բարձր ինտելեկտը, բարեխղճությունը, նրբանկատությունը, հռետորական ունակությունը, խանդավառությունը, հումորի զգացումը դասախոսները գնահատել են կարևոր, բայց ոչ առաջնային: Ստացված արդյունքները վկայում են, որ հայ դասախոսները աշխատանքի մեջ արժևորում են վերը

նշված մասնագիտական-հոգեբանական որակները: Առաջնորդվում են այն որակներով, որոնք նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Գրականություն

1. **Агузумцян Р.В.** Анализ психологических характеристик преподавателей вуза Высшая школа: опыт, проблемы, перспективы Москва, 15-17 апреля 2015 г. https://elib.grsu.by/katalog/505953pdf.pdf?d=true
2. **Никандров В.В.** Экспериментальная психология. Учебное пособие. СПб.:Издательство «Речь», 2003. 480 с.
3. **ПодповетнаяЮ.В., Резанович И.В.** Концепция развития научно-методической культуры преподавателя вуза :монография / М. : ВЛАДОС, 2012. 258 с
4. **РачковскаяН.А.** Чувство юмора как элемент эмоциональной культуры будущего социального педагога М. Год: 2007. 344-349 с. http://ru.osvita.ua/school/method/technol/43238/
5. **Харченко Л.Н.** Преподаватель современного вуза: компетентностная модель. М., 2014 https://www.libfox.ru/654113-leonid-harchenko-prepodavatel-sovremennogo-vuza-kompetentnostnaya-model.html
6. **Collins M.L.** The Role of Enthusiasm in Quality Teaching // Improving College& University Teaching. Third International Conference Session: Newcastleon Tyne, England, 1977.

ИЗУЧЕНИЕ ПРОФЕССИОНАЛЬНЫХ И ПСИХОЛОГИЧЕСКИХ КАЧЕСТВ МЕНЕДЖЕРОВ ОБРАЗОВАНИЯ

Месропян В. М. (ГАУ РА, Ереван, Армения)

В статье обобщены результаты экспертизы профессиональных и психологических качеств преподавателей. Эксперты выделяют профессиональные глубокие знания, коммуникабельность, умение анализировать, стремление к саморазвитию, эмоциональную стабильность как основные необходимые профессиональные качества. Преподаватели также подчеркивали высокий интеллект, честность, деликатность, риторические способности, энтузиазм и чувство юмора, но не считали их первичным. Полученные результаты доказывают, что армянские преподаватели ценят вышеупомянутые профессиональные психологические качества. Они руководствуются качествами, которые способствуют повышению эффективности образовательного процесса.

Ключевые слова: *руководители образования, преподаватель, измерения, психологические качества, профессиональные качества, экспертный опросник:*

THE STUDY OF PROFESSIONAL AND PSYCHOLOGICAL QUALITIES OF THE MANAGERS OF EDUCATION

Mesrobyan V. M. (PAA RA, Yerevan, Armenia)

The article summarizes the results of the expertise of professional and psychological qualities of the lecturers. Experts have highlighted the professional deep knowledge, communication ability, ability to analyze, aspiration for self-development, emotional stability as primary essential professional qualities.The lecturers also emphasized high intellect, honesty, delicacy, rhetorical ability, enthusiasm and sense of humor, but they did not consider them to be primary. The results indicate that the Armenian professors value the above mentioned professional psychological qualities. They are guided by the qualities that contribute to the effectiveness of the educational process.

Keywords: *education manager, lecturer, standard, psychological qualifications, professional qualifications, expert quiz.*